

50 mil

29 յուլիս 1949

Հոգեջնորհ

ՅՀՍուրբաս Վրգ. Գալճայեան

Նախագահ Հոգաբարձութեան Ս. Ծարութիւն Եկեղեցւոյ

ՍԱՌԻՔ ՄԻԼՎՈՐԻ

Սիրելի Հ. Սուրբաս,

Կը լսեմ թէ պարբերաբար Ձեր Բլիվլէնա այցելելու պարտա-
կանութիւնը չէք կատարեր: Կը լսեմ նաեւ թէ տեղւոյդ Ձեր հոգաբարձու-
թիւնը կը շանայ զժուարթութիւն հանել Ձեր պարտականութեան կատարման:

Կը ծանուցանենք Ձեզ որ թէ դուք եւ թէ Ձեր հոգաբարձու-
թիւնը պարտաւոր էք հնազանդիլ տրուած հրահանգներուն: Եթէ Պատեթ Միլվորի
եւ Բլիվլէնաի հոգաբարձութեանց միջեւ վճարմանց խնդրոյն մասին անհամաձայնու-
թիւն կայ, կ'նայ մեզի որոշապէս տեղեկագրել, երկու կողմերուն առարկութիւննե-
րը ներկայացնելով, եւ մենք վերջնական վճիռը կու տանք: Իսկ անկարգապահու-
թիւն նկատմամբ մեր կանոնադրութեան տրամադրութիւնները կը գործադրենք:

Պէտք է լաւ գիտնաք թէ դուք Աւետարանի եւ Ձեր Յիսուսի
պաշտօնեան էք, եւ պէտք չէ թոյլ տայ որ որեւէ մէկը Ձեր պարտի կատարման
առջեւ խռչնդառ կանգնի:

Հայրական սիրով եւ օրհնութեամբ
Մեամք ազօթակից

Փետրուար 13, 1952

Հոգեշնորհ
Տ. Սուրբիաս Վրդ. Գայնահան
Նախագահ պատ. Հոգաբարձութեան
Ս. Միլիվոզիի Համայնքին,

Ստացած ենք ամսույս 1 թուակիր Զեր գրութիւնը որով կը տեղեկացնէիք թէ Զեր նախագահութեամբ կատարուած է Համայնքիդ Հոգաբարձական ընտրութիւնը եւ ներկայացնելով նորընտիրներուն ցանկը կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն իբրեւ եկեղեցւոյ նախանձախնդիր եւ անձնուէր անդամներ, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը հետեւեալ կարգով. -

- | | |
|----------------------|--------------|
| Տեարթ Արամ Զորպանեան | Ատենապետ |
| Դագէս Պարսամեան | Փոխ-Ատենապետ |
| Յովակիմ Երլանճեան | Ատենադպիր |
| Նշան Եսայեան | Գանձապահ |
| Եղիա Զէօրտիւքեան | Հաշուակալ |

Կ'օրհնենք նորընտիր Հոգաբարձուները եւ կը մաղթենք որ անոնք կատարեալ սիրով եւ փոխադարձ համերաշխութեամբ բոլորեն արդիւնաւոր գործունէութեան շրջան մը մեր սուրբ եկեղեցւոյ պայծառութեան եւ Տիրոջը փառքին համար:


Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթակից

Փոխանորդ Առաջնորդի Հայոց
Ամբրիկայի

W. Allen

Նոյեմբեր 11, 1953

Հոգեշնորհ
Տ. Սուրբաա վրդ. Գալմանան
Հոգևոր Հովիտ Ս. Յովհ. Սկեզեցույ
Ռեւոզ Ալիս



Սիրելի Հայր Սուրբաա.

Ռեւոզ Ալիսի որակի նախուց Համար Մասնաւոր Հիմ-
նադրամի վարչութիւնը տրամադր է 3000 տալարի փոխառութիւն
մը ընել առանց առկոսի, սակայն Հետեւեալ պայմանները կան առ
այդ:

1- Այդ գումարը պէտք է Հիմնադրամին վերադարձուի
երեք տարուան ընթացքին:

2- Անհատիկ պահուցութիւններ պէտք է տրուին
վարչութիւնը այս գումարի երեք տարուան մէջ վճարուելուն
Համար: Իրենց օրինակի Համար վեց Հոգի գանել որոնք 500-
սկան տալարի պահուցութիւն տան, ըսելով որ մինչեւ երեք տարի
եթէ գումարը չվերադարձուի իրենցմէ իւրաքանչիւրը պատասխանատու
է 500 տալարի Համար:

3- Մասնաւոր Հիմնադրամը փոխառութիւնը կ'ընել
այն ծուխն բուն՝ որոնք մեր կանոնագրի 89-րդ յօդուանի տրամա-
գրութիւնը գործադրանք են:

Եթէ Միական Խորհուրդը այս պայմաններն ընդունի՝
այդ պարագային առաջին առթիւ կը ստանաք 3000 տալարը:

Այս մասին գրեցէք մեզ ծուխիդ որոշումը առաջին
առթիւ:

Հայրական սիրոյ ողջունիւի
ազօթակից

ԱՄԱՆՆՈՐԳ ՀԱՅՈՑ ԱՄՏՐԻՒԱՅԻ

Նոյեմբեր 11, 1953

Հոգեշնորհ
Տ. Սուքիաս վրդ. Գալմսեան
Նախագահ Մայր Եկեղեցւոյ, և Ազգային
Տան Յանձնարարութիւն, Ս. Միլօսի

Սիրելի Հայր Սուքիաս,

Տեղւոյդ Մայր Եկեղեցւոյ, և Ազգային Տան Միմու-
թեան հաշիւային յետազոտութեամբ, Սեկայն անհրաժեշտ է որ
այժմէն այդ հաշիւ թուականը սրբուցէ, այս անգամ վերջնակա-
նապէս, և մեզ հաղորդէ, եւ վրձարձանակ կանուխէն տեսնել
վեց եզան գաղտնաւորութիւնները:

Միւս կողմէն կը յանձնարարենք որ Յանձնարարութիւն
քով եզան գաղտն. ինչ ալ ըլլայ, անոր գումարը, մեզ հաղորդէ
առաջին աստի, որ պրօվանտարի մեր բանեկարարին հաշույն:

Կ'ըմբ հայրական սիրոյ ոգևորելի
ազօթակէք

ԱՍԱԶՆՈՐԿ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Ապրիլ 21.1955

Պատուարժան
Միսկան Խորհուրդ
Ս. Սարգսիսի Եկեղեցու
Ս. Միլկոսի.

Ազնի սիրելի մեր.

Այսու կը յայտնենք թէ Թեմական Խորհուրդի որոշմամբ
արտօնած ենք Ռէյսոյի Հոգեւոր Հովիւ Տ. Արթուր Աւետարանի փա-
խազրուելու 7 Գլխածորնիս Ան կը մեկնի յառաջիկայ Մայիսի վեր-
ջին շաբթուս

Մինչեւ այն ժամանակ եթէ չկարողացանք անոր տեղը ու-
րիշ Հովիւ մը նշանակել, պիտի յանձնարարենք Ձեր սիրելիութեան
օր ցնոր անօրինութիւն, անցեալին մէջ կիրարկուած կանոնին Համա-
ձայն, Հոգ. Տ. Սուքիաս Վրդ. Գալճաշեան յանձնածէր նաեւ Ռէյսոյ-
ի Համայնքին Հոգեւոր մատակարարութիւնը

Էիսյոյս ենք որ մեր այս կարգադրութիւնը Ձեր ծախին
եւ Միսկան Խորհուրդի կողմէ սիրով պիտի ընդունուի. մանաւանդ
նկատի ունենալով որ ամառային օրերը կը մտնենք եւ եկեղեցիներ
ները այնքան բազմաթիւն չեն ըլլար Հաւատարեալներով:

Հազարգովով զայս առ ի գիտութիւն եւ ի զօրծազրու-
թիւնս

Մտամք Հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունքս.

Ազօթարար

ՄԱՍՐԻՆ ԱՐԹՅՈՒՍՅԱՆՈՐԱՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1187
Ապրիլ 6, 1960

Հոգեշնորհ
Տ. Սուրբիա Ս. Արղ. Գալմայեան
Նախագահ Միակամ Խորհուրդի
Ս. Թարութիւն Եկեղեցւոյ
Ս. Միլվոսի.

Սիրելի Հայր Սուրբ.

Ստացան ենք 1960 Մարտ 30 Թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէք թէ Ձեր նախագահութեամբ 1959 Դեկտեմբեր 27ին գու-
մարուած Ժառանգ ժողովին մէջ ընտրուած են Միակամ Խորհուրդի նոր
անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած աններուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերայիշեալ անները ըստ օրինի ըն-
տրուած են եւ իբրեւ Եկեղեցւոյ զարտահանալ անդամներ կը վայել-
լին ընտրողներու գաւառութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց
ընտրութիւնը հետեւեալ կարգով.-

Տիարք՝ Գարսամ Գարսամեան
Հէրրի Նապիտեան
Այրա Ելէնա
Սարգիս Աւագեան

Կ'օրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք Ձեզի ու
զառուարժան Միակամ Խորհուրդիդ համերաշխ ու քեզմեւտար գործու-
նէութիւն ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ
մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մեծից Տիրուանդ սիրոյ ոգչունիւ
Աղօթարար

ՍՈՆ ԱՐՇԵՐՈՍԿՈՐՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1461

Սգոստոս 10, 1960

Հոգեշնորհ
Տ. Սուքիաս Ս. Վրդ. Գալեայեան
Հոգեւոր Հովիւ Ս. Ծարուծիւն Եկեղեցւոյ
եւ նախագահ Միական Խորհուրդի
Ս. Միլվոքի.

Սիրելի Հայր Սուրբ.

Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով այսու Զեզի եւ պատուարժան
Միական Խորհուրդիդ յիշեցնել, թէ Առաջնորդարանի 50.000 տոլարի հան-
գանակութեան արշաւին առթիւ Ձեր թուիսին 750.00 տոլարի եւ Ուեսդ Ալի-
սի ծուխին 250.00 տոլարի գօթա սահմանուած էր:

Զեզի դրկուած ժամանակացոյցին վրայ Ձեր ծուխին եւ Ուեսդ Ալի-
սի ծուխին հանգանակութեան ձեռնարկի օր նշանակուած էր Մայիս 15 եւ
յանձնարարուած էր որ ընթացք տայիք գործին ու Առաջնորդարան հաղորդէիք
արդիւնքը:

Այս մասին ցարդ ձեզմէ իմացած չըլլալով՝ յանձնարարուած ենք
խնդրելու ձեզմէ որ մէկ շաբաթուան ընթացքին Առաջնորդարան գրէք ձեր
երկու ծուխերուն հանգանակութեան ձեռնարկի նոր թուականի մասին, որ-
պէս զի մեր պատրաստելիք նոր ժամանակացոյցին վրայ նշանակենք:

Առաջնորդ Սրբազանի հրահանգն է որ մինչեւ Հոկտեմբերի կիսուն
տեղի ունենան ձեր երկու ծուխերուն հանգանակութեան ձեռնարկները, ու-
րեմն, հաճեցէք կարեւորութեամբ նկատի ունենալ այս պարագան եւ երկու
ծուխերու Միական Խորհուրդներուն հետ գործակցաբար ընթացք տալ գործին:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով:

Մնամ խորին յարգանքք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ Առաջնորդարանի

Թիւ 2203
Յունիս 22, 1961

Մեծայարգ
Տիար Իսահակ Հայտարեան
Ատենապետ Միական Խորհուրդի
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ս. Միլիանի.

Յարգելի Պրն. Հայտարեան,

Սօս երկու տարի առաջ Թեմական Պատգամաւորական Ժողովը որոշեց 50.000 տոլարի հանգանակութեան արշաւ մը ընել Առաջնորդարանի պարտուց բարձման եւ բացառիկ ծախքերուն համար, եւ ձեր համայնքը տակաւին չէ կատարած իր պարտականութիւնը, հակառակ քանիցս Առաջնորդարանէն եղած յիշեցումներուն եւ յորդորներուն:

Թեմական Խորհուրդը, իր վերջին նիստին մէջ, անգրադաւանաւոր վայս հարցին, որոշեց մասնաւոր հրահանգ տալ մեր այն եռախնդուն, որոնք տակաւին չեն վճարած իրենց սահմանուած գօթաները, եւ պարտք ընել անոնց վրայ որ մինչեւ տարւոյս վախճանը վճարեն իրենց պարտքը՝ հաւասարակշռելու համար Առաջնորդարանի պիւտճէն:

Աստահ ենք թէ նկատի կ'առնէք այս յոյժ կարեւոր հարցը եւ ձեզի բաժին հանուած գօթան ամբողջութեամբ գոյացնելով՝ առաջին աւիթով կը փոխանցէք Առաջնորդարան:

Կը մաղթենք այս ուղղութեամբ ձեր կատարած աշխատանքներուն կատարեալ յաջողութիւն:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Քի 1805
Յունուար 5, 1961

Արժանաշնորհ
Տ. Արթուրյան Ազգ. Գաղափար
Հոգևոր Հոգի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ս. Միլիանի.

Սիրելի Տէր Հայր.

Առաջնորդ Արքայան Հոր յանձնարարութեամբ այսու կը յայտնենք.
Քէ ստացուած է Ս. Միլիանի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Միակն Խորհուրդի
տարեկան տեղեկագիրը եւ ամենազգիւր Պրն. Հէրի Լակտանանի ու Թեմա-
կան պատգամաւոր Պրն. Կարապետ Գաղափարեանի ստորագրութիւնը կրող նա-
մակը ի մասին միակն ճամնակի ընտրութեան:

Առաջնորդ Արքայան Հայրը կը փափայի Ձեր ուշադրութեան յանձնել
հետեւեալ կէտերը.-

1. Տեղեկագիրին մէջ չէ տրուած Միակն Խորհուրդի տարեկան մուտք
եւ թիւ:
2. Երկու Թեմական Գաղափարները ընտրուած է Միակն Ժողովին կողմէ.
Մինչդեռ 4-րտուր տեղ մը Քէ Եկեղեցւոյ տրամու տեղամասերուն թիւը
60 է: /1960ի տեղեկագիրին մէջ ըսուած էր 115 տեղամաս ունի Ձեր Ե-
կեղեցին, իսկ Յունիս 13 թուակիր նամակով վարեանեալ Տ.Սուրբա
Ս. Արդ. Գաղափարեան կը հաղորդէր Քէ 200 տրամու տեղամաս կայ/ւ. Եթէ
փակագիրի մէջ տրուած թիւերը ճիշդ չեն եւ իսկապէս Ձեր Ժուրը ու-
նի միայն 60 տեղամաս, այդ պարագային, ըստ Թեմական Կանոնադրութեան
չէք կրնար երկու Թեմական Գաղափարները ընտրել, քանի որ հարիւր
տեղամաս ունեցող համայնք մը կու տայ մէկ Գաղափար, 101 կամ մին-
չեւ 200 տեղամաս ունեցող Ժուրը կու տայ երկու Գաղափար:
3. Տեղեկագիրին մէջ ըսուած է Քէ 55 հոգի մասնակցած են ժողովին, բայց
նամակին մէջ չէ գրուած Քէ ընտրեալներին իւրաքանչիւրը քանի թու
ստացած է:
4. Նամակը Ձեր ստորագրութիւնը չի կրեր, ինչ որ անհրաժեշտ է:

Հանցելը վերոյիշեալ թիրիները լրացնել պատուարժան Միակն Խորհուրդի
եւ Թեմական Գաղափար Պրն. Կարապետ Գաղափարեանի հետ խորհրդակցարար, որ-
պէս զի Թեմական Խորհուրդը վաւերացնէ Ձեր ընտրութիւնները:

Առաջնորդ Արքայանի հրահանգն է որ Ձեր Ժուրը վերստէ Առաջնորդարանի
հանդէպ ունենցած հետեւեալ պարտքերը.- 480 տուար Թեմական տուրք, 30 տուար
Առաջնորդարանի օրացոյցներու համար, 16.50 "Էջմիածին" ամսագրի, 18 տուար
Վեհափառ Հայրապետի գիրքերուն եւ 1.50 տուար Էջմիածնի գրպանի օրացոյցներու
համար:

Ըստ Թեմական կանոնադրութեան, Առաջնորդարանի ենթակայ ծուխերու սահմանուած տուրքերն ու գօթաները վճարելի են տնտեսական տարւոյ ընթացքին: Ատահարաբ, դուք եւ պատուարժան Միսկան Խորհուրդդ այս պարագան նկատի ունենալով՝ նախանձախնդրութեամբ պիտի կատարէք Ձեր պարտականութիւնները հանդէպ Առաջնորդարանի որուն տնտեսական պէտքերը կը հոգացուին Թեմական Պատգամաւորական Ժողովի կողմէ սահմանուած պիւտճէին համաձայն:

Մաղթելով Ձեզի եւ պատուարժան Միսկան Խորհուրդիդ բոլոր անդամներուն կարողութիւն եւ յաջողութիւն:

Մնամ խորին յարգանք

Աուրէն Մանուէլեան
Դիւանագետ

Քիւ 1910
Փետրուար 16, 1961

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս Աւագ ՔՆՆյ. Փափազեան
Այլընտրուելու և Լախագահ Միական Խորհուրդի
Ս. Ձարութիւն Եկեղեցւոյ
Ս. Միկոյանի.

Սիրելի Տէր Հայր.

Ստացած ենք 1960, Դեկտեմբեր 19 թուական Ձեր տեղեկագիրը,
որով կը հաղորդէ թէ Ձեր նախագահութեամբ՝ Դեկտեմբեր 11ին գու-
ժարուած Միական ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի
ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը
խնդրէ ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական ժողովը տեղի ունեցած է
Թեմական Կանոնադրութեան արամադրութեանց համաձայն, եւ ընտրուած
անձերը, իբրեւ Եկեղեցւոյ Նախանձախնդիր ու Նախորդական անդամներ,
կը վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը
վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

Տիար՝ Գաբրիէլ Գաբրիէլեան
Նազար Կալեան
Մեսրոպ Աէշեան

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պա-
ուարժան Միական Խորհուրդի յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն,
ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի շինութիւն համայնքի մեր սի-
րեցեալ ժողովուրդին:

Մեծաք Տիբուանդ սիրոյ ոգևոյնի
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐՄԵՐԻՍԿՈՐՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 4072
Մարտ 8, 1962

Նորին Ս. Օձնութիւն
Տ.Տ. Վազգէն Առաջին
Մայրապետին Պատրիարք եւ Կաթողիկոս
Ամենայն Հայոց,
Մայր Աթոռ, ի Ս. Եջմիածին.

Վեհափառ Տէր,

Մեր թեմի Սառւթճ Միլուոքիի նորակառոյց Ս. Յարութիւն
եկեղեցւոյ օձման կարգը պիտի կատարենք Ապրիլ 15-ին: Սառւթճ Միլ-
ուոքիի փոքրիկ համայնքը մեր թեմի հին ծուխներն մին է, ժողովուրդը
մեծաւ մասամբ բարեպաշտ կիսարացի գործաւորներ են, որոնք մեծ զոհո-
ւթեամբ յանձն առին շինել եկեղեցին մօտ 100,000 տուարով:

Պիտի խնդրէինք որ բարեհաճէիք հեռագիրով մը հաղորդել Ձեր
Ս. Օձնութեան Հայրապետական օրհնութիւնները Սառւթճ Միլուոքիի եկեղե-
ցաշէն ժողովուրդին:

Այս առիթէն օգտուելով Ձերդ Վեհափառութեան կը հաղորդենք
թէ Մայամիի մէջ ալ հիմք դրինք սրահի մը շինութեան, անցեալ ամսու
25-ին, որ երեք ամիսէն պիտի աւարտի, եւ որ 40,000 տուար պիտի արժէ
Մայամիի փոքրիկ ծուխին, որ մեծ ապագայ կը խոստանայ:

Մատչելով Հայրապետական Ս. Աշոյն ի համբոյր
Մնամք որդիական սիրով

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Սառւթճ Միլուոքիի հասցեն է՝
St. Haroutune Armenian Apostolic Church
L. B. 143,
South Milwaukee, Wisconsin.

Թիւ 10099
Նոյեմբեր 7, 1963

Արժանաշնորհ
Տ. Կիւրեղ ԶԸՆՅ. Գաղտնայեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Միակեան Խորհուրդի
Ս.Միւկոսի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Այսու կը յայտնենք թէ Ձեր համայնքի թեմական պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է նոր պատգամաւորներու ու անձնակազմի ստեղծումը ընտրութիւն կատարէք:

Կը յանձնարարենք որ Ձեր նոր պատգամաւորներու անուն-հասցէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը Մարտ ամսոյ սկիզբը, որպէսզի կարելի ըլլայ թեմական Պատգամաւորական Ժողովի հրաւիրել զիրենք եւ իրենց ղրկել թեմական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը:

Ըստ թեմական Պատգամաւորական Ժողովի որոշման, Առաջնորդարանի Դիւանը պիտի կատարէ նորընտիր պատգամաւորներու ստուգումը, հետեւաբար, կը թելադրենք որ Ձեր եւ Միակեան Խորհուրդի ատենապետի եւ ատենադպիրի կողմէ ստորագրուած պատգամաւորներուն վկայագիրին բնագիրը ղրկէք Առաջնորդարան: Ձեր պատգամաւորները, Ժողովին ներկայանալու ատեն, պէտք է ի ձեռին ունենան իրենց վկայագիրներուն պատճենը:

Մնամք Տիրաւեռք սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵԳԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

ՄԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՅԱՐՈՒՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

909 Միչիգեն Եվրի
Սառլս Միլվուքի, Վիսքոնսին



PARISH COUNCIL
Of
St. Haroutune Armenian Church
909 Michigan Avenue
South Milwaukee, Wisconsin
Phone: SO 2-7460

Մայիս 6, 1963

Գերաշնորհ
Տ. Սիրոն Արքեպիսկոպոս Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք 16, Ն. Ե.

Սրբազան Հայր:

Այս գրութեամբ կուգամ հաղորդել Ձեր Սրբազնութեանը թէ՞
Եկեղեցւոյս ծիսական Խորհուրդին վերջին ժողովին մէջ որոշեցինք
Եկեղեցւոյս Օժման առաջին տարեդարձի Տօնակատարութիւն կատարել
Կիրակի, Յունիս 9, 1963:

Այս առթիւ կուգամ ուրախութեամբ եւ սիրով հրաւիրել Ձեր
Հարրութիւնը ներկայ ըլլալու եւ, Պատարագելու Բարոզելու եւ,
Նախագահելու ճաշկերոյթին:

Սրբազան Հայր՝ սոյն ճաշկերոյթին առթիւ կուգենք պատուել
նաեւ, Եկեղեցւոյս երկարամեայ իր ծառայութիւնը բերող Շնորհ
Սարկաւազ Մուրատեանը. Ձեր Սրբազնութեան Օրհնութեան գրովը,
եւ Առաջնորդարանիս պատուոյ շքանշանովը:

Սրբազան Հայր՝ եթէ երբէք յարմար կը տեսնէք այս հնդրանքը.
հաճեցէք դրականօրէն պատասխանել. գնահատելով իր ծառայութիւնը,
եւ ուրախացնելով Գաղութիս հաւատացեալ ժողովուրդը:


Արդ՝ այս առթիւ կրկին կը խնդրեմ Ձեր Սրբազնութենէն որ.
Եկեղեցւոյս իր ծառայութիւնը բերող եւ Ս. Պատարագին սպասարկող
Տիար Բարսեղ Վահրեսեանին Ուրարկրութեան աստճման տայիք:

Սրբազան Հայր, ընդունեցէք մեր եւ ծիսական Խորհուրդիս բոլոր
անդամներուն շնորհակալութիւններն ու երախտագիտական անկեղծ
զգացումները; ~~Սպասելով Ձեր~~ Դրական պատասխանին:

Handwritten signature in Armenian script

Ստաշիքով ի Համբոյր Ա. Արոյդ
Handwritten signature in Armenian script
Կիրեղ Բնյ, Գալֆայեան Հովիւ:
Ս. Յարութիւն Հայց. Եկեղեցւոյ
Սառլս Միլվուքի, Վիսքոնսին:

ՄԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՅԱՐՈՒՏԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
909 Միչիգան Էվենթ-
Սաութ Միլվուքի, Վիսքոնսին



PARISH COUNCIL
Of
St. Haroutune Armenian Church
909 Michigan Avenue
South Milwaukee, Wisconsin
Phone: SO 2-7460

Ապրիլ 16, 1963

Գերաշնորհ
Տ. Միոն Արքեպիսկոպոս Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք 16, Ն. Ե.

Սրբազան Հայց:

Սաութ Միլվուքիի՝ Սուրբ Յարուսթիւն Հայց. Եկեղեցւոյ անդամներու եւ անդամուհիներու մտքին մէջ. վերջին բանի մը ամիսներու ընթացքին ստեղծուեցաւ տարակարծրութիւն եր եւ վրդովիչ երեւոյթ մը. սոյն եկեղեցւոյ անունին անգլերէնին ուղիղ թարգմանութեանը համար:

Սրբազան Հայր՝ ինչպէս գիտեր, Ձեր վերջին այցելութեան ընթացքին դելադրեցիք մեզի որ, այս եկեղեցւոյ անունին թարգմանութիւնը ճշգրիտ ըլլայ. փոխանակ Սէյնթ Յարուսթիւն Կոչելու, այլ կոչուի ՀՕԼԻ ՌէզոլուիթըՇՆ ԱՐՄԻՆՅՆ ԶԸՐԶ: Հետեւաբար, հետեւելով ձեր ըրած դելադրութեանը զրաւոր եւ բերամացի բացատրեցինք, եւ Օրինակներով ցոյց տուինք իրենց թէ՛ տարիներու ընթացքին եկեղեցւոյ այս անունին թարգմանութիւնը սխալ է եղած, եւ Սէյնթ Յարուսթիւն անունով անձ գոյութիւն չունին մեր եւ Օտար Եկեղեցիներուն մէջ: Աժբախտաբար սակայն, մեր ըրած այս դելադրութիւններն ու աշխատանքը ոեւէ մէկ արդիւնք մը չտուաւ, եւ փոխանակ իրենց ըրած այս սխալը ճշդելու եւ հետեւելու, յամառ կեցուածք մը ցոյց տուին:

Սրբազան Հայր՝ կը խնդրեմ Ձեզմէ որ պաշտօնական նամակով մը Հայերէն եւ անգլերէն լեզուներով հաղորդէիք ծիական Խորհուրդի անդամներուն եւ ժողովուրդին, մեղմացնելու համար այս շփոթութիւնը, եւ ճշտելու համար այս գործածուած սխալը:

Արդ՝ կանխայայտ շնորհակալութիւններով եւ երախտագիտական զգացումներով կը յայտնեմ իմ անկեղծ սէրս, եւ դրականօրէն կսպասեմ Ձեր Հայրութեան պատասխանին:

Մատչիմ Ձերդ Սրբազնութեան Սուրբ

Արքեպիսկոպոս
Նիւ Եորքի Ս. Գալֆայեան Հովիւ:
Սուրբ Յարուսթիւն Հայց. Եկեղեցւոյ:


Ս . Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔ . ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՒՐԵՂ ՔԷՆՑ . ԳԱԼՖԱՑԵԱՆ . Հոլի
ՀՈՎՈՒՍՏՈՒՆ SO 2-7460 ԳՐԱՍԵՆՍԱԿ SO 2-9072

Holy Resurrection Armenian
Apostolic Church

909 Michigan Avenue
South Milwaukee, Wisconsin
Reverend Guregh Kalfayan, Pastor
Office - SO 2-7460 Rectory - SO 2-9072

Յոկնիս 12, 1965



Գերաշնորհ
Տ. Սիոն Արք. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք 16, Ն.Շ.

Սրբազան Հայր:

Ինչպէս գիտէք՝ Ձեր տուած որոշումը եւ հրահանգը եւ յանձնա
րարութիւնը մեր տան վարձքին վրայով, մեր ծխական խորհուրդին
կողմէ մնաց անգործադրելի: Եւ վստահ ենք որ իրենց այս որոշումը
պիտի չենթարկուի որոշեւէ փոփոխութեան, ու պիտի ներկիւղ
շարունակուի:

Ուրեմն՝ հանդերձեալ ենք Ձեր ուշադրութեան յանձնել որ. մենք
որ նիւթականով անկարող ենք այժմ վճարել այդ փոքր մէկ մասը, հապա,
ինչպէս՝ պիտի վճարենք երբ այս ամսուն վերջ անոնք այդ վարձքին
որոշ մէկ մասը ու աւելիով մեր վարձքն, ու մենք ալ ստիպուած
ըլլանք վճարելու: Ուստի, խոնարհաբար կուզամ խնդրելու Ձեր
Հայրութենէն որ. երբ իմացայ որ այս կողմերը գալու տրամադրութիւն մը
ունիք այս ամսոյն վերջը, պիտի փափագէի որ. մեր ծխական խորհուրդին
հետ որոշ կարգադրութիւն մը ընէիք այս մասին:

Սակայն, եթէ երբէք Դուք Սրբազան Հայր, քանի մեզի համար
ըրած էք որոշ կարգադրութիւն մը որ. մեր փոխադրութիւնը ըլլայ
այս ընթացիք ամսուն մէջ, եւ կամ վերջերը: հարկ չկայ երբէք
որ դուք այս մասին խօսիք եւ կարգադրութիւն մը ըրնէք ծխական
խորհուրդին հետ:

Սրբազան Հայր, հետեւաբար կուզամ որդիական ջերմ զգացումս
եւ անկեղծ շնորհակալութիւնս յայտնել Ձերին Սրբազնութեան եւ
ապա խնդրել Ձեզմէ որ այս մասին կը յուսամ կուտաք ձեր դրական
գատասխանը ընելով որոշ կարգադրութիւն մը:

Ստաջելով Ձեր Սրբազնութեան

ի Սուրբ Աջոյն

Guregh Kalfayan

Կիւրեղ Քէնյ. Գալֆայեան

Քիւ 12288
Փետրուար 8, 1966

Արժանաշնորհ
Տ. Կիւրեղ ՔՆՆ. Գալֆայեան
Հոգեւոր Հովիւ Սրբոց Կարգանանց Եկեղեցւոյ
եւ Նախագահ Գառուարժան Ժիական Խորհուրդի
Լոյել.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Սաացած ենք Ձեր 1966 Յունուար 25 թուակիր սեղեկագիրը, որով
կը սեղեկացնէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Յունուար 28ին գումարուած
Ձեր Տարեկան Ժիական Ժողովին Մէջ կատարուած է ժիական Խորհուրդի
մասնակի ընտրութիւն, եւ Ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը,
կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման գաշաճնագիրը:

Սկսած ունենալով որ Ձեր ժողովը սեղի ունեցած է Քեմական Կա-
նոնադրութեան արամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած
է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք Նախաձեռնութիւնը իբրեւ անդամ
Ժիական Խորհուրդի:

Տիարք՝ Ժրէնք Մինասեան
Ջաւէն Գլուճեան
Գեորգ Սեանեան
Ազատ Ժգնաւորեան
Հատւորա Մանոյեան

Կը յանձնարարենք որ Ձեր Ժիական Խորհուրդի նոր ղիւանի եւ
նորընտիր Քեմական գաղափարներու հասցէները Առաջնորդարան ղրկէք
առաջին գառնութեամբ:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ
Ձեր գաշաճակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան ապրի
մը, ի գայժառութիւն Ս. Եկեղեցւոյն եւ ի հոգեւոր շինութիւն հա-
մայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՌՆ ԱՐՔԵԳԻՍԱՆՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

Թիւ 15206
Նոյեմբեր 1, 1966

Արժանաշնորհ
Տ. Գրիգոր ԶԸՅ. Հայրապետեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցոյ
էւ Նստագահ Միակեան Խորհուրդի
Ա. Միւլիօշի.

Սիրելի Տեա Գրիգոր,

Ուրախ եմ որ Տ. Սարգիս ԶԸՅ. Գաշտգեանի Հետ խորհրդակցութեամբ
կարգադրած էք որ համայնքիդ մեր առաջին ալիքի ու թիւնը նոյեմբեր
15, 1966, երեքշաբթի օր:

Հանձնելու հետեւեալ կէտերը ի մտի ունենալ.-

1. Կը փոխարինք խորհրդակցութիւն մը ունենալ Ձեր, Միակեան Խոր-
հուրդի եւ Թեմական Պատգամաւորներու Հետ, յետ միջօրէի ժամը
5-7:
2. "Հրաշտփառ" ով մուտք Ս. Յարութիւն Եկեղեցին, ժամը 8ին:
3. Եկեղեցոյ սրահին մէջ տեսակցութիւն բաւոր կազմակերպու-
թեանց վարչական մարմիններուն հետ, որուն կրնան ներկայ
ըլլալ բոլոր ժողովանները:

Վերոյիշեալ կէտերը նկատի ունենալով, եթէ այլ կարգադրութիւն
ունիք ի մտի հանձնելու մեզի հաղորդել:

Սիրոյ ողջունելու
եւ օրհնութեամբ

ԹՐԴՈՄ ԵՊԻՍԿՈՍՍ
Առջնորդ

Քիւ 18081
Մայիս 31, 1966

Արժանաշնորհ
Տ. Գրիգոր ՔՆՆյ. Հայրապետեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
եւ Նախագահ Գաղութեան Ժիւղական Խորհուրդի
Ստուծ Միւլորի.

Սիրելի Տէր Գրիգոր,

Սասցած ենք Ձեր 1966 Մայիս 26 թուակիր տեղեկագիրը, որով կը խորհէք թէ Յունուար 16ին գումարուած Ձեր ծիական ժողովին մէջ կատարուած է ծիական Խորհուրդի մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընդունելութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Սկսած ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Քեմական Կանոնադրութեան արամադրութեան իմաստայն, եւ ընտրութիւնը կատարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք իտեւեալները իբրեւ անդամ ծիական Խորհուրդի:

Տիարք՝ Ներսէս Ներսէսեան
Ճէրի Քէշիշեան
Մագար Գալեան
Նրուանդ Տէրտէրեան (Գարսամ Գարսամեանի տեղ)

Կը յանձնարարենք որ այսուհետեւ Ձեր տեղեկագիրը Առաջնորդարան ղրկէք ծիական ժողովէն անմիջապէս ետքը:

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան սարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն Ձեր իմասայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունելի
Աղօթարար

ՄԻՈՆ ԱՐՔԵԳՈՍԵՈԳՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

Թիւ 17063
Մարտ 14, 1967

Արժանաշնորհ
Տ. Գրիգոր ԲՆՆՅ. Հայրապետեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիան Եկեղեցւոյ
եւ նախագահ Միակեան Խորհուրդի
Մասիս Միկվոսի.

Սիրելի Տէր Գրիգոր,

Ստացած ենք Մարտ 8, 1967 թուակիր Ձեր նամակը, Համաձայն Ձեր
խնդրանքին, Համայնքից Ձեր այցելութեան թուական կը նշանակենք Սեպտ.
10ի շարաքաղերը:

Նոյն ատիժով կը կատարենք նաեւ զպիտի ատիժաններու տուչութիւնը
զարաց զատիժ պահանջ տեղանքներուն Իսկ ուրոք տուչութիւն Ձեր խնդրանքը
Սարգիս անուանով երիտասարդին Համար, կը նաեւ նկատի առնել ձեր ատիժը
ուսեմանը զինքը անհրաժեշտ տեսնելու, եւ եթէ ինչ այժմէն արամադրութիւն
զայց ապա սորովե՞նա Համաձայն Ձեր ցուցմունքներուն, կը թելազրենք որ
"Ասրիաւազ" երկապնակէն օրինակ մը Հայթայթից իրեն եւ Գառարազամասոյցի
զինքն մը օտանապնակէն սարկաւազի օտիժները սարկի երգապնակէն:

Պատկի Խորհուրդի կապակցութեամբ Ձեզի ներթափանցած զոյգը կարելի
է պահել: Այս պատգամային, սակայն, իմաստուն պիտի ըլլայ պահանջել որ
խաչեզրայրը Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ մկրտուած անդամ մը ըլլայ:

Ձեր խնդրանք կրկնելու ձայնագրութիւնը կը յուսանք շուտով զրկել
Ձեզի: "Ուրախ ենք" եւ "Էջմիածին" երգերը արդէն ունիք զպրօն գտնելու
Միութեան Հրատարակած վերջին Հատարաններուն մէջ:

Սիրոյ ողջունիւ

ՅՈՐԳՈՅ ԵՂԻՍԱՅԱՆ
Առաջնորդ

Քր. 17066
Մայիս 14, 1967

Արտակարգ
Ս. Գրիգորյան, Հայաստանի
Հոգևոր Հոգի Ս. Տարաթիւն Ազգայնական
և Կոմունիստական Խորհուրդի
Առաջ Միջոցով

Սրբուհի Տե Գորգոս

Ապրիլի 2 կիրակի օր ժնե պիտի գտնուիք Եզրնոցի Ս. Տղայի Ազ-
գայնական ժողովի մասին կարգադրանք ենք որ Միս-Ռեկոնստրուկցիոն Սե-
կցիոններու հոգևորական և Ժողովական Խորհուրդներուն, Բնական Սեկցիոն
Ռեկոնստրուկցիոն Ս. Տղայի Ազգայնական ժողովի մասին ինչպէս նաև Միս-
Ռեկոնստրուկցիոն Խորհուրդի անդամներուն հետ խորհրդակցական
ժողով մը անհնար:

Ուստի, Հանդէս գալով ձեր անգամ Միս-Ռեկոնստրուկցիոն և Միս-
կոնստրուկցիոն ժողովի անդամները ինչ կարելի է խորհրդակցական ժողովին
ներկայ ըլլալ կենտրոնի Ս. Տղայի Ազգայնական ժողովի մասին 1967, կի-
րակի գրիցի մասին ժնե:

1. Խորհրդակցական ժողովի անդամները մասնաւոր ծրարի մը Միս-
Ռեկոնստրուկցիոն Սեկցիոններու կարգադրանքներուն համար ուսուցիչներ
և վարիչներ ժողովուն:

Խորհրդակցական ժողովի մասնակցին Միս-Ռեկոնստրուկցիոն Սեկցիոնի
ժողովին կարգադրանքները յիշելով, Սեկցիոն, Ս. Կոմունիստական
և Ս. Տղայի Ազգայնական:

2. Խորհրդակցական ժողովի անդամները Միս-Ռեկոնստրուկցիոն ժողովին
նկատի մը անհնար և և ըստ այնմ ծրարի մը կարգադրանքները:

3. Կրնանք նկատի առնել որ ինչ կարգ որ գալով և փութալով ներ-
կայանք:

Կը յուսանք որ կը անսնդ կարծադրանքները այս ժողովին և կը շա-
նայ անգամներ ներկայ ըլլալ ձեր Ժողովական Խորհուրդի անդամներով:

Միս-Ռեկոնստրուկցիոն

ՍՐԵՐՈՄ ԵՐԵՎԱՆԻ
Առաջնորդ

Յուլիս 5, 1967

Արժ.

Տ. Գրիգոր ՁԵՆՅ. Հայրապետեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Հայր. Եղեղեցւոյ եւ
Նախագահ Միակեան Խորհրդոյ,
Ատութ Միլուօցի.

Սիրելի Տէր Գրիգոր,

Մայիս 24ին գումարուած Թեմական Խորհուրդի նիստին մէջ, ընթացք տալով
Թեմական Ժողովի որոշումին, հետեւեալ կարգադրութիւնը ըրինք կրօնական-
Դաստիարակութեան համար մասնաւոր յայտագրի մը իրագործման մասին:

1.— Ձեզի կը ղրկենք վեց էջերէ բաղկացեալ ընդհանուր Ծրագիր մը որ
զաղափար կուտայ կատարուելիք աշխատանքներու մասին:

2.— Մասնաւոր Յայտագրի պատասխանատու պաշտօնեայ նշանակած ենք Օր.
Լընոր Թուրիկեանը որ պիտի նկատուի Առաջնորդարանի պաշտօնեայ, ենթակայ
Առաջնորդարանի հրահանգներուն:

3.— Օր. Լընոր Թուրիկեանի եւ այս Յայտագրի ծախքերը պիտի վճարուին
Առաջնորդարանի միջոցաւ: Ուստի ձեր համայնքին մասնակցութեան նիւթական
բաժինը պիտի ակնկալենք որ Առաջնորդարան ղրկէք, երբ ձեզի յիշեցնենք:

4.— Ձեզմէ կ'ակնկալենք որ համայնքիդ համար Կրօնական Դաստիարակութեան
Թանձնախումբ մը կազմէք անմիջապէս, հետեւեալ անձերէ բաղկացած,—

- ա— Հովիւ
- բ— Միակեան Խորհուրդի Ատենապետը կամ ներկայացուցիչ մը.
- գ— Կիրականօրեայ Վարժարանի Տեսուչը.
- դ— Տիկնանց Միութենէն —երէց կամ կրտսեր— ներկայացուցիչ մը.
- ե— Երիտասարդներէն ներկայացուցիչ մը.

Ասոնց անունը, հասցէն եւ հեռախօսի թիւը հաճեցէք մեզ ղրկել, մինչեւ
Յուլիս 20, 1967:

5.— Օր. Լընոր Թուրիկեան պիտի ձեռնարկէ իր պաշտօնին Յուլիս 1,
1967էն սկսեալ:

6.— Յառաջիկային ձեզի պիտի իմացնենք թէ ինչպէս եւ երբ խորհրդակցա-
կան առաջին հանդիպումը տեղի պիտի ունենայ համայնքիդ կրօնական Դաստիա-
րակութեան Թանձնախումբին եւ Օր. Լընոր Թուրիկեանին հետ:

Սիրոյ Ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թի: 19156
Օգոստոս 28, 1967

Արժանացնորհ
Տ. Գրիգոր ԶԷՆՂ. Հայրապետան
Հոգևոր Հովիտի Սր. Զարուսթիւն Եկեղեցւոյ
Եւ Լախազակ Միսկան Խորհուրդի
Ստոլթ Միլիտարի.

Սիրելի Տէր Գրիգոր.

Առաջնորդարանիս Մասնաւոր Հիմնադրամի Ցանձնախումբի Հարցաւիպէն
տապաւ ենք Օգոստոս 15, 1967 Քուակիր Կամակ մը. որով կը Հարգող
մեզ որ 1961 Մայիս 10ին Համայնքի փոխառութիւն եղած է 10,000
տալար, զոր տաւնց տեղոսի իրաւացած էր վերադարձնել 1966 Յունիս 1ին:
Ձեր պայմանագրով լրացած է եւ տուց տակաւին կը պարտիք 10,000 տալար:

Կարևոր է զուց ձեր խոստումը պահել մէկէ աւելի պատճառներով.
զորս այստեղ յիշել անհրաժեշտ չենք տեսնել: Ուստի, կ'ակնկալենք որ
եթէ Հարկ լինի Մասնաւոր կարգադրութիւն Հանիք կատարել եւ ձեր անունին
արժանազարուած պարտքը Առաջնորդարան Հանիք զրկել առաջին առիթով:

Սիրոյ ոգջունի:

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

№ 12150
Օգոստոս 28, 1967

Արմենիոյ
Է. Տրոյի ԲԿԿ. Հայաստանի
Լոնտոն Լոնդ. Սր. Բարձրիկ Սեկցիոն,
էւ Լոնտոնի Սր. Բարձրիկ
Առաջ Միջոց:

Սրբիկ Սր. Տրոյ:

Հայաստանի Սրբուհի Ինքնուրույն Բարձրիկի Հայաստանի
առաջիկայ Օգոստոս 15, 1967 թուականի համար ԲԿ. ԲԿ. ԿԵ
ՀԿ ԵՐ 1967-Յայն 10-ին Հայաստանի Բարձրիկի համար 10,000
առաջ, ինչ որպէս առաջիկայ իրանցում է (հարգումով), 1966 Յայն 1-ին
ձեռք առնելու համար է և անկախ ինչ որպէս 10,000 առաջ:

Սրբիկ Սր. Տրոյ ձեռք առնելու համար ինչ որպէս առաջիկայ
զորս առաջիկայ ինչ որպէս առաջիկայ ինչ որպէս առաջիկայ
էր ինչ որպէս ինչ որպէս ինչ որպէս ինչ որպէս ինչ որպէս
առաջիկայ ինչ որպէս ինչ որպէս ինչ որպէս ինչ որպէս

Արա. Եզրեւոր:

ՍՐԵՍ ԵՐԵՎԱՆԻ
Հայաստան

Քիւ 21084
Յուլիս 19, 1968

Մեծայարգ
Տիար Հէրրի Մապեան
Առեւտրային Ժառանգութեան Բարձրագոյն
Ս. Տարուիքիւն Եկեղեցւոյ
Սառի Միլվորթի.

Սիրելի Պրն. Մապեան,

Տ. Գրիգոր ՔԳՆ. Հայրապետանը ներկայիս նշանակած ենք այցելու
հովիւ մեր այն համայնքներուն, ուր մնայուն հոգեւորական չունինք:

Ուստի կը թելադրենք ձեզ որ հոգեւորականի կարիք երբ ունենաք ձեր
համայնքին մէջ, առջին առիթով հաղորդակցիք Տ. Գրիգոր Քահանային հետ,
եւ իր օժանդակութիւնը ապահովէք: Եթէ ինք կարող չէ օգտակար ըլլալ, այն
ատեն կը դիմէք Առաջնորդի Փոխանորդ Կազմէն Սրբազանին:

Տ. Գրիգոր Քահանան երբ Ս. Գառնազ մատուցանելու համար համայն-
քիդ այցելէ իրեն պիտի յակացնէք եօթանասուն եւ հինգ (75) տուար:

Մինչեւ որ կարենանք մնայուն հոգեւոր հովիւ մը ապահովել համայն-
քիդ համար, պարտաւոր ենք զօրանալ վերոյիշեալ կարգադրութեամբ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՆՊՈՍԵՆՈՐՈՍ
Առաջնորդ

Յ. Գ. - Տ. Գրիգոր ՔԳՆ. Հայրապետանի
հասցէն եւ հեռախօսի թիւը հետեւեալն է...
1419 Mackinac Ave.
South Milwaukee, Wis., 53172
Tel: (414) 766-2145

Քիւ 21050
Յունիս 28, 1968

Արժանաշնորհ
Տ. Գրիգոր ԲՆՅ. Հայրապետեան
Հովիւ Ս. Յարութիւն Հայց. Եկեղեցւոյ
Նախագահ Ժրական Խորհուրդի
Սառւթ Միլվորի.

Սիրելի Տէր Գրիգոր,

Նկատի ունինք Ձեր կողմէ մեզի ուղղուած խնդրագիրը, ուր իոզե-
կան ազնապով եւ իորունկ իմնողումով կը ներկայացնէիք Ձեր զգա-
ցումը թէ Ձեր կեանքին կոչումը կը նկատէք մեր ժողովուրդին մէջ
կազմակերպել եւ աւարձել Ս. Գրիգոր ընթերցանութեան փոփոքը, իոզեւոր
զարթումի եւ ընտանեկան դաշտամուտի անհրաժեշտութիւնը:

Հակառակ որ իովուական զորձերու իմար իոզեւորականի պակասը
զգալի է, կը թելադրենք Ձեզ մեծնարկել Ձեր առաջադրութեան: Հաս-
կընալի է որ ըստ ամենայնի իււաաւրիմ գիտի մասը Հայց. Եկեղեցւոյ
դաւանութեան եւ օւանդութեանց եւ նմակայ Առաջնորդական մեր իշ-
խանութեան:

Եւ որպէսզի իրգաւորենք Սառւթ Միլվորիի մեր խամակերն իոզեւոր
կարիքները, գաշտօն յանձնած ենք Տ. Յանան ԲՆՅ. Կախիթեանին որ Ձեր
եւ Ժրական Խորհուրդին ինա իորհրդակցի եւ մեզի իաղորդէ իր թելադ-
րութիւնները:

Կը մաղթենք որ Աստուծոյ Սուրբ Հոգին զօրացնէ Ձեզ եւ մեր
եկեղեցւոյ բոլոր զաւակները:

Սիրոյ ողջունելի

ՅՈՐԳՈՍ ԱՐԶԵԳՈՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Քիւ 21820
Հոկտեմբեր 18, 1968

Մեծայարգ
Տիար Հէրրի Մապետեան
Ասենապետ Ժիական Ռորնուրդի
Ս. Յարուիիւն Հայց. Եկեղիցւոյ
Սառւթ Միւլօթի.

Սիրելի Գրն. Մապետեան,

Անգամ մը եւս կը յիշեցնենք Ժիական Ռորնուրդիդ թէ համայնքիդ
անունով Առաջնորդարանի Լոն Ընտ Կրանթ Հիմնադրամէն 10,000 տուար
քոյ առած էիք, 1966ին վճարելու պայմանաւ, բայց տակաւին պարտա-
կան կը մնար 8,000 տուար:

Հիմնադրամի Քանձնախոււմը արդարօրէն զայրացած է մէկ քանի
համայնքներու ցուցարեբրած անհոգութեան եւ պարտազանցութեան պատ-
ճառով:

Ե՛ւակընկալենք որ կարելորութեամբ նկատի առնէք այս պարագան եւ
հիմնական կարգադրութիւն մը ընէք այս մասին:

Սիրոյ-ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԵՍԳՆՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Քիւ 21958
Օգոստոս 25, 1969

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Վրդ. Քէշիշեան
Հովիւ Ս. Մեսրոպ Հայր. Եկեղեցւոյ
եւ Սախազահ Ժիական Խորհուրդի
Սառւթ Միլվորքի-

Սիրելի Հայր Վազգէն,

Ծանօթ է Ձեզ որ Միտ Ուեսթի մեր ութը եկեղեցիներէն չորսը առանց
հոգեւոր հովիւի պիտի մնան մօտիկ ժամանակէն: Այդ համայնքներն են Իսթ
Սէյնթ Լուիզ, Պեսթ Ալիս, Բէյսիւն եւ Սառւթ Փոլլմըն:

Սոյն համայնքներուն հոգեւոր կարիքները հոգալու համար կ'ակնկալենք
որ Պէօթիկընի, Սառւթ Միլվորքի հոգեւոր հովիւները եւ Տ. Գրիգոր Քհնյ.
Հայրապետեան որոշ պատասխանատուութիւն ստանձնեն:

Պէտքի մեր հրահանգն է որ վերոյիշեալ հոգեւորականները եւ Տ. Ծաճա
Քհնյ. Կալիթեան միասին խորհրդակցութիւն մը ունենան եւ ժամանակացոյց
մը կազմեն անհովիւ համայնքներուն այցելութեան: Սոյն կարգադրութեանց
պատասխանատու կը նշանակենք Տ. Վազգէն Վրդ. Մաղոյեան որուն տեղեակ պէտք
է պահեն միւս հոգեւոր հայիերը կարգադրութեանց մէջ որեւէ փոփոխութեան
պարագային:

Սոյն ժամանակացոյցը կ'ակնկալենք որ մեզի ներկայացուի մինչեւ Սեպ-
տեմբեր 10, 1969, որպէս զի նախ քան դժբախտ Ս. Էջմիածին մեր մեկնումը
Սեպտեմբեր 19ին, կարենանք համայնքներուն հաղորդել վերջնական կարգա-
դրութեանց մասին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 22609
Սեպտեմբեր 2, 1970

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Արդ. Քէշիշեան
Հովիւ Ս. Յարութիւն Հայց. Եկեղեցւոյ
եւ Ստիագահ ծխական Խորհուրդի
Ստութ Սիւվոքի.

Սիրելի Հայր Վազգէն,

Սեպտեմբեր 11-Հոկտեմբեր 13 Նրուսաղէմ պիտի գտնուինք, բայց յոյս ունինք որ ժամանակին վերադարձած պիտի ըլլանք 2եր համայնքին մեր այցելութեան ժամադրութիւնը պահելու համար:

Ներկայիս օդանաւի կարգադրութիւն ըրած ենք ըստ հետեւեալին.-Հոկտեմբեր 17, Շարաթ կէսօրէ յետոյ ժամը 1.40ին կը ժամանենք Սիւվոքիի օդակայան: Նոյն իրիկունը ժամը Յին կիրակատից արարողութիւնը կը կատարենք եւ դպրաց դասի հետ կիրակի օրուան պաշտամունքի պատրաստութիւնը ընելէ յետոյ, ժամը 9ին ծխական Խորհուրդի հետ ժողով կ'ունենանք:

Կիրակի օր 2եր կազմած յայտագրին կը հետեւինք: Նրկուշաբթի գիշեր ժամը Յին ծխական Խորհուրդի եւ Եկեղեցւոյ բոլոր կազմակերպութեանց միացեալ ժողովը կ'ունենանք, որուն ազատ են մասնակցելու համայնքի անդամները:

Նրեքշաբթի օրէն սկսեալ պիտի այցելենք նոյն շրջանակի մէջ եղող մեր միւս համայնքներուն:

Տէրը եթէ կամի, Նրուսաղէմէն մեր վերադարձին կը տեսնուինք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԿՈՄ ԱՐԶԵՊՈՍԿՈՎՈՍ
Առաջնորդ

Քիւ 24464
Փետրուար 18, 1975

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ատութ Միւլոքի.

Սիրելի Հայր Արշակ,

Ձեր համայնքին աւելիք մեր այցելութեան ընթացքին՝ անհրաժեշտ է որ Հինգշաբթի, Մարտ 6, կ.ե. ժամը 4.00ին Յամբայ ելլենք դէպի Ռէյսին, ուր հանդիպում մը պիտի ունենանք տեղւոյն ծխական Խորհուրդին հետ: Համեցէք կարգադրել որ մէկը մեզ ամբի Ռէյսին եւ նոյն օրը վերադարձնէ Ատութ Միւլոքի, որպէս զի ժամը 8.00ին ձեր եկեղեցւոյ մէջ սկսինք մեր հանդիպումին՝ համաձայն ձեր կարգադրութեան:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԵՌԳՈՍ
Առաջնորդ

Քիւ 24545
Ապրիլ 28, 1975

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Ստուծ Միլուրդի.

Սիրելի Հայր Արշակ,

Ժիշդ երէկ սասցանք Ձեր եկեղեցւոյ Ժիական Ժողովի անենագրութիւնը՝ որմի տեղեկացանք թէ Ձեր նախագահութեամբ Յունուար 26ին զումարուած համայնքիդ Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ուր տրուած է նաեւ անոնց սասցած քուէներուն թիւը:

Այսու կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Ատենագրութենէն տեղեկացանք նաեւ որ Յոյն Ժողովին մէջ ընտրուած է երկրորդ պատգամաւոր մը: Ձեր համայնքի պատգամաւորներու ընտրութիւնը պէտք է տեղի ունենայ 1976 թուականին՝ արուած ըլլալով որ վերջին ընտրութիւնը եղած է 1972 թուականին: Չորս տարուան ընթացքին եթէ որեւէ պատճառով ընտրուած պատգամաւոր մը հրաժարի, անոր անձնափոխանորդը կը փոխարինէ զինք՝ մինչեւ անոր ժամանակաշրջանի աւարտումը, եւ ըլլոր պատգամաւորներու ընտրութիւնը կը կատարուի միասին յոյն շրջանին:

Համեցէք փութով ամբողջացնել եւ Առաջնորդարան ղրկել ներփակեալ տեղեկագիրը, ինչպէս նաեւ Ժիական Ժողովին ներկայացուած ըլլոր տեղեկագիրները:

Կ'օրհնենք Ժիական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մտղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան սարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

Հըրպըրթ Գարսամեան
Փիթըր Թամուզեան
Մաթ Գառէմեան
Ճան Սահակեան

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՅԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Քիւ 24444
Յունուար 17, 1975

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Սառլթ Միլվօրի.

Սիրելի Հայր Արշակ,

Սաացած ենք Դեկտ. 10, 1974 թուակիր ձեր նամակը, ինչպէս նաեւ Եկեղեցւոյդ օժման 50րդ տարեդարձին նուիրուած գրքերոյկը՝ որ բովանդակալից եւ գեղատալ հրատարակութիւն մըն է. կը զնահատենք այդ ուղղութեամբ ձեր տարած աշխատանքը:

Ուրախութեամբ տեղեկացանք նաեւ որ տարեդարձի ձեռնարկները եւ ճաշկերոյթը յա՞ողութեամբ պատկուած են: Ար շնորհաւորենք ձեզ եւ սխական Խորհուրդիդ անդամները՝ մաղթելով նոր յա՞ողութիւններ ձեր Եկեղեցանուէր գործունէութեանց:

Սիրոյ ող՞ունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Նոյեմբեր 18, 1977

Հոգեշնորհ
Տ. Արշակ Ծ. Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Սառւթ Միլոուքի.

Հոգեշնորհ Հայր Սուրբ,

Միջին Արեւմտեան շրջան այցելութեան առթիւ ինծի վերապահած ձեր ազնիւ ընդունելութեան համար կը յայտնեմ իմ խորին ընորհակալութիւնը:

Ուրախ եմ որ Սառւթ Միլոուքիի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Հայ Դպրոցի աշխատանքները յառաջ կը տարուին աշխուժութեամբ: Աւելի յաջողութիւն կը մաղթեմ այս նուիրական աշխատանքի ի նպաստ Հայ Դպրոցի պատասխանատուներու յանձն առած ջանքերուն:

Այս առթիւ կը փափաքեմ տեղեկացնել որ Ուորիկընի մէջ Հայ Դպրոց մը սկսելու համար կարիքը ունին ուսուցչի մը կամ ուսուցչուհիի մը. եթէ այս փնտտութիւն մէջ կարենաք օգտակար ըլլալ՝ մեծապէս շնորհակալ պիտի ըլլամ: Անոնք պատրաստ են նաեւ վճարում մը ընել այս աշխատանքը ստանձնողին:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝

Խորին յարգանք

Սիլվա Տէր Ստեփանեան
Կրթական Տեսուչ

Քիւ 25189
Մարտ 14, 1977

Հոգեշնորհ
Տ. Արշակ Ծ. Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Յկֆղեցւոյ
Նախագահ Ժիւզիան Խորհուրդի
Ատութ Միւլտրի.

Սիրելի Հայր Արշակ,

Առաջած ենք Մարտ 2, 1977 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յետուար 20ին գումարուած համայնքիդ Ժիւզիան Ժողովին մէջ կատարուած է Ժիւզիան Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուժարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր Ժիւզիան Ժողովը տեղի ունեցած է թեմական նախնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիւզիան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Հանցեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիւզիան Խորհուրդի նորընտիր Գիւլանի անդամոց անունները:

Օրհնելով Ժիւզիան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան արի մը, ի պայծառութիւն Ս. Յկֆղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցնալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵԳԻՍԿՈՐՈՍ
Առաջնորդ

Համբար Զէյիշեան
Մերի Հայալեան
Հերրի Լարեան
Հարութ Գէյլերեան

Քիւ 25218
Մարտ 29, 1977

Հոգեշնորհ
Տ. Արշակ Ծ. Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ատութ Միւլուորի.

Սիրելի Հայր Արշակ,

Առանձին ծրարով ձեր հասցէին կը գրկենք Յ.Ս.Օ.Տ.Տ. Վազ-
գէն Ա. Արքայանագոյն Կաթողիկոսի սրբաառ Պոնդակը շնորհուած
Մայր Աթոռի բարերար Տիար Տովակին Մուրաբեանի:

Վաստէն ձեր որ պատշաճ առիթով մը, կամ հրապարակային հան-
դիսութեան մը ընթացքին, պաշտօնազէս յիշեալ Պոնդակը կը յանձ-
նէք Տիար Տ. Մուրաբեանի:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՇԳԻՍԿՈՐՈՍ
Առաջնորդ

Քիւ 25749
Ապրիլ 20, 1978

Մեծայարգ
Տիար Հարութ Պէյլէրեան
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ժխական Խորհուրդի Ատենապետ
Սառլթ Միլուոքի.

Յարգելի Տիար Պէյլէրեան,

Ստացած ենք Ապրիլ 7, 1978 թուակիր ձեր նամակը, որով
կը տեղեկացնէք թէ Վիճակիս 76րդ Տարեկան Թեմական Պատգա-
մաւորական ժողովին՝ համայնքիդ պատգամաւոր Տիար Կիւլըրթ
ժանտիկեանի տեղ անձնափոխանորդ Տիկ. Կրէյս Հաճինեանը պի-
տի մասնակցի:

Տիկ. Կրէյս Հաճինեանի անունը պիտի աւելցուի Վիճակիս
Պատգամաւորներու ցանկին մէջ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՊաթնորդ

Քիւ 26819
Մարտ 28, 1979

Մեծայարգ
Տիար Հարրլա Պէյլէրեան
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
ժխական Խորհուրդի Ասեմապետ
Ատութ Միլուրքի.

Յարգելի Տիար Պէյլէրեան,

Ասացած ենք Մարտ 18, 1979 թուակիր Եկեղեցւոյ տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Յունուար 28ին գումարուած համայնքի ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի սասը անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացուելով բուէ-արկութեան արդիւնքը՝ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, քստ ստորեւ տրուած ցանկին:

Այս առթիւ կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել որ համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ նորընտիր ժխական Խորհուրդի դիւանը կը կազմուի Առաջնորդին կողմէ ընտրութիւնները վաւերացուելէն ետք:

Հաճեցէք ներփակեալ տեղեկագիրները ստորագել աւել ետք վերադարձնել Առաջնորդարան: Իսկ նլեւմասկան հաշուեկշիռը, էջ 8, պէտ է ամբողջացնել: Համաձայն ներկայացուած հաշիւներուն 3919.17 տուար տոկոս օգնացած էք: Պէտք է ցոյց աւել թէ այս տոկոսին դրամագլուխը կամ մայր գումարը ի՞նչ է եւ ո՞ւր արձանագրուած է:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մտղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Ներսէս Ներսէսեան
Կիլպըրթ ճանախկեան
Գիթըր Թամուզեան
Գիթըր Սահակեան
Հարլի Էսէէմեան
Մէյըր ճանախկեան

Ռասըլ Բէյիշեան՝ մէկ տարի
Մաթիու Էտէմեան՝ մէկ տարի
Տրդատ Տրդատեան՝ մէկ տարի
Հըրպըրթ Պարսամեան՝ մէկ տարի

Քիւ 25281
Մայիս 20, 1977

Հրգեշնորհ
Տ. Արշակ Ծ. Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Ակեղեցւոյ
Ստուբ Միլվորի.

Սիրելի Հայր Արշակ,

Սաացած ենք Ապրիլ 29, 1977 թուակիր ձեր նամակը: Աւրախ ենք որ պարտ ու գառշած ձեւով Նորին Արքունիքեան սրբատառ Կոնդակը յանձնած էք Տիար Յովակիմ Մուրաթեանի:

Իսկ յիշեալ անձի կաակի պարաստութեան համար կը յանձնարարենք որ անդւոյն վրայ վստահելի փաստաթանի մը միջոցաւ պարաստուի կաակի նախագիծը եւ դրկուի մեզի սուուզելու համար անոր բովանդակութիւնը, ինչպէս նաեւ անուսի եւ փոխանցման կերպի մշտրութիւնը: Ապա, իր վերջնական ձեւին մէջ կաակը կը վերադարձնենք՝ ենթակային կողմէ ստորագրուելու համար:

Վստահ ենք որ առաջին տոիթով պիտի գրադիք այս հարցով եւ կաակի նախագիծը պիտի դրկէք մեզի:

Լաւագոյն մաղթանքներ ձեր եւ Տիար Մուրաթեանի առողջութեան եւ արեւշատութեան համար:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՆԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Քիւ 25742
Ապրիլ 17, 1978

Մեծայարգ
Տիար Հարրլա Պէյլէրեան
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ժիական Խորհուրդի Ատենապետ
Սառլթ Միլուոքի.

Յարգելի Տիար Պէյլէրեան,

Ժամանակին ստացած ենք ձեր նամակը, որով կը տեղեկացնէիք
համայնքիդ ժիական ժողովի ընտրութեանց արդիւնքները: Սակայն
սակաւին չենք ստացած ժիական ժողովի տեղեկագիրները:

Այսու գիրով կը վաւերացնենք Տիար Եսայի Եսայեանի եւ Էե-
րովբէ Պալեանի ընտրութիւնը՝ որպէս ժիական Խորհուրդի անդամ:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նո-
րընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի
թիւերը, ինչպէս նաեւ ժիական ժողովի ատենագրութիւնը եւ տե-
ղեկագիրները:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող
եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս.
Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն հաջայնքիդ մեր սիրեցեալ
ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ՅՈՐԳՈՄ ԱՐՁԵԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Քիւ 26570
Նոյեմբեր 26, 1979

**Մեծայարգ
Տիար Ներսէս Ներսէսեան
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ժխական Խորհուրդի Ատենապետ
Աաութ Միլուոքի.**

Յարգելի Տիար Ներսէսեան,

Այսու գիրով կը յայտնենք թէ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներուն եւ անոնց անձնափոխանորդներուն համար, Թեմական Կանոնադրութեան 14-9, եւ 54 յօդուածներուն համաձայն:

Կը յանձնարարենք որ ձեր նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէները Առաջնորդարան դրկէք, ամենէն ուշը Փետրուար ամսուան սկիզբը, որպէս զի կարելի ըլլայ զիրենք Թեմական Պատգամաւորական Ժողովին հրաւիրել, որ տեղի պիտի ունենայ Մայիս 29էն 31, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը, Ուաշինկթընի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ:

Կը թելադրենք որ նորընտիր պատգամաւորներուն ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, Ժխական Խորհուրդի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ ստորագրուած Առաջնորդարան դրկէք առաջին պատեհութեամբ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ



ՍՐ. ՅԱԿՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ST. JAMES ARMENIAN CHURCH

816 Clark Street
Evanston, Illinois 60201

Very Rev. Varoujan Dz. V.
Kabaradjian
PASTOR

21 Հոկտեմբեր 1985

Հոգեշնորհ
Տ. Բարգեճ Աբեղայ Անուշեան
Լէնսինկ, Միշիկըն

Հոգեշնորհ եւ Սիրելի Հայր Անուշեան,

Ներկազ Կը գտնէք Սառլի Միլոքիի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ 1985
եւ 1986 շրջանի Սրբազան Պատարագներու կարգացոյցը: Վստահ եմ որ, ձեր
կարելին պիտի չխնայէք վերոյիշեալը կատարելու ի հոգեւոր մխիթարութիւն
մերազն հաւատացեալներու:


Հոս, Կը յիշեցնեմ նաեւ թէ Մարտ 23, 1986ին որ է Տօն Եղկազարդի
հանդերձեալ էք Ոգիկընի Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցանելու
եւ բանին կենաց քարոզութեամբ մխիթարելու հաւատացեալները:

Եղբայրական ջերմ սիրով Առօրեակից՝

Վարուժան Եւրոզ Գապրուսեան

Սիրելի Հայր Անուշեան,

Հոս Կ' ուզեմ աւելցնել թէ Յունուար 19, 1986ին, եւս Սուրբ
Պատարագ պիտի մատուցանես Ոգիկընի Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ:



ՍՐ. ՅԱԿՈՒԲ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ST. JAMES ARMENIAN CHURCH

816 Clark Street
Evanston, Illinois 60201

Very Rev. Varoujan Dz. V.
Kabaradjian
PASTOR

21 Հոկտեմբեր 1985

Արժանաշնորհ
Տօգրիգոր Քհնյօ Հայրապետեան, Հովիւ
ՍօՅովակիմ եւ Աննա ՀայցօՍոաքօԵկեղեցւոյ
ԲԵՅԼԸՍ Հայց, ԻԼԼԻՆՈՅ

Արժանաշնորհ Հոգեւոր Եղբայր,

Կ՞ ուզեմ ձեր սիրելիութիւնը գիտակ պահել թէ, Սաութ Միլոքիի
ՍօՅարութիւն եկեղեցւոյ ՍօՊատարագներու պարտականութիւնը յանձնած ենք
Հոգեշնորհ Տօբաբգէն Աբեղայ Անուշեանի: Հետեւաբար շրջանիս հոգեւորս—
կանները ազատ կացուցուած են այդ պարտականութենէն:

Իսկ Ոգիկընի ՍօԳեորգ եկեղեցւոյ համար պատրաստուած Սրբազան
Պատարագներու կարգացոյցը կը մնայ անայլայլ:

Եղբայրական շեղմ սիրով Արքեպիսկոպոս

Վարդապետ Եւրգէն Գապարեան



ՍԲ. ՅԱԿՈՒ ԼԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ST. JAMES ARMENIAN CHURCH

816 Clark Street
Evanston, Illinois 60201

Very Rev. Varoujan Dz. V.
Kabaradjian
PASTOR

Հոկտեմբեր 21, 1985

**Հոգեշնորհ
Տօխաժակ վրդ.Պարսամեան
Առաջնորդական Փոխանորդ Արեւելեան Թեմին
Նիւ Եորք, Ն.Ե.**

Հոգեշնորհ եւ Սիրելի Հոգեւոր եղբայր,

Ներքակ կը գտնես Սառլթ Միլոքիի Սուրբ Թարութիւն եւ Ոգիկընի Սուրբ Գեորգ եկեղեցիներու համար պատրաստուած Սուրբ Պատարագներու կարգացոյցը: Հոս կ' ուզեմ յիշել թէ Սառլթ Միլոքիի յանձնեցի Հոգշ.Հայր Բաբգէն Անուշեանին: Արդէն կարգացոյցները Լոնէեայն կը բացատրեն քեզի:

Եղբայրական ջերմ սիրով Աղօթակէց՝

Վարուժան Ե.Վրդ.Գապահանեան



ՍՐ. ՅԱԿՈՒԲ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ST. JAMES ARMENIAN CHURCH

816 Clark Street
Evanston, Illinois 60201

Very Rev. Varoujan Dz. V.
Kabaradjian
PASTOR

Նոյեմբեր 20, 1985

**Հոգեշնորհ
Տօխածակ Վրդ.Պարսամեան
Առաջնորդի փոխանորդ Արեւելեան Թեմին
Նիւ Եորք Ն.Ե.**

Հոգեշնորհ Հայր Պարսամեան,

**Ներկակ կը գտնես նոր կարգացոյցը Ս.Պատարագներու
Ստուլթ Միւլոքիի Սօճարուծիւն Եկեղեցւոյ համար՝ Այս կարգացոյցէն
դրկած եմ նաեւ Հայր Բաբգէն Անուշեանին եւ ան գիտակ է արդէն:**

Եղբայրական շերտ Յիրով:

Վարուժան Ծ.Վրդ.Վարդանյան



ՄԲ. ՅԱԿՈՒԲ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ST. JAMES ARMENIAN CHURCH

816 Clark Street
Evanston, Illinois 60201

662
182 B
195
599

Very Rev. Varoujan Dz. V.
Kabaradjian
PASTOR

Մարտ 13, 1989

Հոգեշնորհ
Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի փոխանորդ
Նիւ Եորք, Ն.Յ.

Հոգեշնորհ եւ Սիրելի Եղբայր,

Կը ներկայեմ զոյգ կարգացոյցները ու Տ. Կարապետ Քոչաքեանի նամակին օրինակը ի մասնաւորի Սառլի Միլոքիի Սուրբ Յարութիւն Եկեղեցիի մասին եւ այդ ուղղութեամբ աւելի լայն բացատրութիւն տուի արդէն հեռախօսին վրայ:

Առիթը օգտագործելով կը յայտնեմ իմ յատուկ շնորհակալութիւններս քեզի, Եղբորդ եւ իր ընտանիքին այդ ջերմ հիւրասիրութեան համար, իսկապէս լաւ ժամանակ մը ունեցայ: Եթէ հաճիս իմ գնահատականս յայտնէ իրենց եւ ձեր այն բարեկամներուն որոնք նոյն գիշեր մեզ հետ առին մաս եւ բաժին: Առիթը օգտագործելով կը շնորհաւորեմ բոլորին ալ Սուրբ Յարութեան Տօնը եւ կը մաղթեմ առողջութիւն եւ ուրախութիւն:

Եղբայրական ջերմ Սիրով Աղօթակից՝

Վարուժան Ծ. Վրդ. Պարսամեան